



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3373

617.7

A-32

Сборного пункта

Чтобы в здании библиотеки
было удобно читателям

Библиотека имеет право

Ա Զ Գ Յ Ա Խ Ի Ն

ՈՒ

ԵՐԱՆԻՑ ՀԵՇՈՒ ՄԱՍԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Կ - 252

(26)

Դ Օ Ք Տ Օ Ր Ռ Ե Բ Ո Յ Հ

Ակնաբոյք Կովկասեան Զինորական Շրջանի:

ԽԵՂԱՆՈՒԹԵԱՆ ԹՈՅԵՏԻՆՈՒԹԻՒՆՎ.

Հ Ր Ա Մ Ա Բ Ա Կ Ո ւ Թ ի ւ ն

ԳՆԴԱՊԵՏ ԱՊԵՔՍԱՆԴՐ Թ. ՄԵԼԻՔ-ՀԱՅԿԱԶԵՐՆԻ

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան Մովսէս Վարդամեանի

1888

617.7

Դ-32

2010

сборного пункта.

Ф.Р.Ф.034 ԶԻՒԹՈՐՆԵՐԻ Հ.Ս.Ա.Ր

ՁԻՆԻՈՐՆԵՐԻ ԱՄԵՆԱՍՈՎՈՐԱԿԱՆ

Ա Զ Ք Ա Ց Ա Ւ Ն

617.7 Կ ՈՒ

Բ-39

ՆՐԱՆԿՑ ՀԵՇՈՒ ՄՆԱԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հ-Հ-Հ-Հ-Հ

Դ Օ Գ Տ Օ Ւ Թ Ե Ց Խ.

Ակամաբոյթ Կովկասեան Զիմսորական Շրջանի:

1003
31086

ԽԵԽԱՆՈՒԹԵԱՆ ԹՈՅԼՏԻՈՒԹԻՒՆՈՎ.

Հ Ր Ա Մ Ա Բ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԳՆԴԱՊԵՏ ԱՂԷՔՍԱՆԴՐ Թ. ՄԵԼԻՔ-ՀԱ.ՑԱԿԱԶԵՍՆԻ

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան Մովսէս Վարդանեանի

1888



ԾԱԲԱՅԱՆԻՔԵԱՆ ՄԵՋ Ե.Պ. Ե. ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՐՄՈՒՆ ԶԻՆՈՐՆԵՐԻՆ ԽՐԱ

16581

Доз. Ценз. Тифлисъ, 22 Ноября, 1888 г.
Тип. М. Вартанянцъ, Тройц. пер. д. № 11

Զինւորներ, այստեղ, ուր դուք հաւաքուածէք, «աչք ացաւով հիւանդների համար առողջապահական կայարան է»։ Դուք զօրքի զանազան մասերիցն էք եւ ձեր թիւը միքանի հարիւր հոգուց աւելի կը լինի. այստեղ դուք ապրում էք լայնարձակ, մաքուր, այստեղ ձեր մասին աւելի են հոգս քաշում, քան թէ զօրանոցներում, այստեղ ձեզանից շատերին բժիշկներն այցելում են ամենայն օր։

Յոդեօք դուք ամենքդ էլ գիտէք եւ լաւ էք

հասկանում, թէ ինչո՞ւ համար են զօրքի զանազան մասերից ձեզ ուղարկել՝ այստեղ «առողջապահական կայարան»։ արդեօք ի՞նչ է ձեր աչքի հիւանդութիւնը և ի՞նչպէս պէտք է հեռու պահէք ձեզ այդ հիւանդութիւնից։

Ձեզանից միքանիսը, մանաւանդ նրանք, որոնք զօրագնդի (պօլկ), գումարտակի (բատալիոն) մէջ են, եւ կամ զօրքի վաշտերի (կօմանդա) մէջ մնացածներից շատերը մինչեւ անգամ ասում են, որ իրենց աչք երը բոլորովին առաջ էն եւ երբէք աչքացաւ

չեն ունեցել. միւսներն ասում են, թէ իրենց աչքերը հենց փոքրութիւնից էլ ջրակալում էին եւ գեռ ծառայութեան ջմտած ցաւում էին. վերջապէս ոմանք էլ՝ թէ ծառայութեան միջոցին սկսեցին ցաւել, սակայն ցաւը, ասում են, սովորական թեթեւ տեսակիցն է եւ ինչն էլեն անց կըկենայ:

Եթէ այդպէս սովորական թեթեւ հիւանդութիւն է ձեր աչքացաւը, ինչպէս որ դուք էք ասում, հապա էլ ինչ ու են ձեզ հաւաքել այս կայարան. եթէ հարկաւոր է, ինչու ձեզ չեն բժշկում զօրագնդի մէջ զօրանոցում. պատճառն ի՞նչ է, որ գանձարանը ձեզ համար աւելի է ծախսում, եւ ինչու է ձեզ համար ծառայութիւնն այդպէս հեշտացրած:

Եթէ շարունակէք կարդալ այս գրքոյիը, այն ժամանակ կըհամարնաք, թէ ինչու:

Դուք ինքներդ էլ գիտէք, որ ձեզանից միքանիսի աչքերը շատ շուտով են կարմրում, եւ թողից, քամուց, շատ զօռելուց ու արեգակից արտասուակալում, ճպւոտում ու մրմնցում են եւ առհասարակ առաւտաները քնից զարթնելիս կպած են լինում:

Ձեզանից ո մանք մինչեւ անգամ ցաւ են զգում աչքերի մէջ. արտասուքն ու ճպուռը յաճախ արգելք են լինում ոչ միայն հրացանաձգութեան ու աշխատութեան. միջոցին, այլ այնպէս, նոյնիսկ առանց աչքերին զոռ տալու:

Ո մանց էլ կոպերն սկսկում են ուսչի եւ

կարմրիլ, աչքերում ճպուռ ու վահրն է երեւում; եւ մարդ այնպէս է կարծում, թէ աւազ է ցանած աչքերի մէջ:

Շատերի վրայ արտագութեան հետք անգամ չի նշանալում,—ոչ կոպերի ուռոյցք, ոչ էլ մինչեւ անգամ կարմրութիւն, շատերի աչքերն արտաքուստ կարծէն նէ առաջ զ են:

Եթէ հիւանդութիւնն արտաքուստ չի երեւում, հապա ո՞րու՞ղ է առաջ հիւանդութիւնը եւ ի՞նչ տեսակիցն է:

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ ԿՈՊԵՐԻ ՅԵՏԵՒՈՒՄ ԵՒ ԿՈՊԵՐԻ ՆԵՐԸԸ

Ձեզանից համարեա իւրաքանչիւրդ իւր կոպերի ներսը մի տեսակ մնային ուռոյցքներ ունի. որինըդմիքանի փոքրիկ հատիկներ են՝ դեղնագոյն կամ կարմրաւոն, որինըդ աւելի մեծ-մեծ են ու խոշոր, իսկ միքանիսներինդ մինչեւ անգամ շատ շատ են այդ մնային ուռոյցքներն ու հատիկները, որոնք խաւեարի (խիզիլալա) նմանութիւն ունին: Բժիշկներն այդ տեսակ հիւանդութիւնը ո՞րո՞իօծո են անուանում: Որքան շատ են հատիկներ կամ ուռոյցքներ, այնքան էլ հիւանդութիւնը սաստիկ է, այնքան էլ գժուար է գրանից ազատուելը, այնքան էլ մեծ զգուշութիւն է հարկաւոր. բոլորովին առողջների կոպերի յետեւում չի լինում մինչեւ անգամ ոչ ամենափոքր ուռոյցներ եւ ոչ էլ հատիկներ: Եթէ

Հիւանդի ներքին կոպը դէպի ներքեւ քաշուի (շուռ տրուի), խակոյն կերեւան այդ հատիկները կամ ուռաոյցները:

Եթէ զօրագնդերի եւ գումարտակների միջից ձեզ բերել են այստեղ՝ առողջապահական կայարան, այդ ասել է թէ ձեր հիւանդութիւնը հասարակ տեսակից չէ. մինչեւ անգամ իրենց աչքերը բոլորովին առողջ համարողներն էլ ունին տրախօմա ասուած հիւանդութիւն, թէեւ թոյլ, փոքր չափով:

Սակայն այդ հիւանդութիւնն ինչո՞վ է երկիւղալի և ինչո՞ւ համար են ձեզ բերել այստեղ:

Այդ տրախօմա ասուած հիւանդութիւնը նրանով է երկիւղալի, որ եթէ թոյլ տրուի եւ առաջը չառնուի, նա հետզհետէ կը սաստ կանայ, սկզբում աննկատելի, դանդաղ ու թաքնուած կերպով, իսկ յետոյ արագաբար. այդ հիւանդութիւնը մինչեւ անգամ վարակիչ—տարափոխիկ է դառնում եւ կարող է, որից Աստուած ազատի, կուրութիւն էլ առաջացնել. անմաքրութիւնից եւ ուրիշ պատճառներից ուռոյցներն ու հատիկները քիչքիչ մեծանում եւ ցնցում են աչքը. սկզբում աչքերի մէջ բարակ ծուկն, պղտորութիւն է զգացվում եւ ապա,—եթէ չի պահ-

պանկում ու բժշկվում,—վառակալում է եւ տեսողութիւնը կորչում: Բայց այդ բոլոր ցաւերից շատ հեշտ կերպով կազմատուի մարդ, թէ առաջուց հոգս քաշէ այդ մասին:

Եթէ յիշէք ձեր տներն ու գիւղերը, գուցէ ձեզանից շատերը մտաբերեն, թէ ինչպէս իրենց ծնողների կամ ծանօթների աչքերը երկար ժամանակ սաստիկ ցաւում էին ու թարախակալում, որից շատերը մինչեւ անգամ կուրացել են, մանաւանդ Վեատի, Ուֆիմի, Կազանի, Վորօնէժի, Խարկովի եւ ուրիշ նահանգներում:

Նատերը գիւղերում եւ շիներում մինչեւ անգամ կուրանում են իրենց տգիտութիւնից:

Բարձրագոյն իշխանութեան կարգադրութիւնով ձեզ ժողովել են այստեղ, որ ձեզ բժշկեն, եւ սովորեցնեն, թէ ինչպէս պէտք է պահպահ անէք ձեզ որպէսզի դուք կազդուրուէք եւ վերագառնաք ձեր տուն, ձեր հայրենիք, ձեր ընտանիքի գիրկը բոլորովին առողջ. իսկ նրանք, որոնց չի յաջողվում բոլորովին առողջանալ,—պիտի լաւ իմանան, թէ ինչ ու իսի հիւանդութիւն է իրենց աչքացաւք եւ ինչպէս պէտք է գրանից հեռու պահեն թէ իրենց եւ թէ ուրիշներին. գրանք ուշի-ուշով թող կարդան այս գրքոյկը:

Եթէ մնայիք ձեր զօրանոցներում, դոք ստիպուած պէտք է լինէիք զինուորին յատուկ բոլոր ծառայութիւնը կրելու, ինչպէս որ կայ. բայց դրանով ձեր հիւանդութիւնն աւելի եւս պէտք է վատթա-

րանար: Իսկ այստեղ ձեր ծառայութիւնը միանգամայն թեթեւացրած է. ձեզ այնպէս են տեղաւորել, որ ձեզ համար արձակ ու լայն է, շոք չէ, եւ բոլորովին խստակլու մաքուր է. այստեղ ձեզ ե՛ւ բժըշկում են, եւ սովորեցնում են:

Աչա թէ ինչու համար են ձեզ ժողովել այստեղ—աչքի առողջապահական կայարան՝ ձմեռ ժամանակ առանձին տների մէջ, ամառը վրաններում, որոնք յաճախ շատ մօտ են լինում անտառին ու ջրին:

Բացի այստեղ ժողովուածներից ձեր զօրքերի մասերում մնացել են եւ ձեր միւս ընկերները, որոնց աչքերը նոյնպէս բռնուած են տրախօմայով, բայց նրանց այդ հիւանդութիւնը գեռ թոյլ է եւ դեռ նոր է սկսվում, իսկ իրենք այդ մասին շատ քիչ բան գիտեն: Նրանց հոլորին ժողովել այստեղ՝ առողջապահական կայարան, չի կարելի, որովհետեւ շատոր են եւ բացի գրանից հարկաւորութիւն էլ չկայ: Այդ հիւանդութեան ձուփիլը, կամ փոքրիկ հատիկը եւ կամ ուռոյցն ունեցող զինորներից համարեա բոլորն էլ կարող են ամենայն տեսակ ծառայութիւն կատարել: Եթէ որ նրանք իրենց մասին հոգս քաշեն եւ ճշտութիւնով կատարեն այն ամենը, ինչ որ ասուած է այս գրքոյկի մէջ, այն ժամանակ նրանց հիւանդութիւնն առանց բժշկութեան էլ կանցայտանայ: Միայն այն է որ նրանք պէտք է առանձին բնակարասներում քննեն՝ կատարեալ առողջներից բոլորովին բաժան:

Պատճառն ի՞նչ է ձեր աչքացաւի. ո՞րտեղից և ի՞նչպէս է յառաջացել այդ հիւանդութիւնը:

Ձեր աչքացաւը յառաջացել է անմաքրութիւնից եւ ձեր շուրջը, ձեր մարմնի, ձեր բոլոր սպիտակեղէնի ու վերնազգեստների վրայ եղած փոշուց ու կեղտից:

Որքան որ զինուորը, եւ հէնց ամենայն մարդ, իրեն մաքուր ու խստակ պահի, այնքան էլ աչքացաւ շատ քիչ կըքաշի:

Երբ թողը, երեսի քրտինքը, ձեռքերի ու շորերի կեղտը, մուրը, մազը, խոտի կամ յարդի մղեղը, ծովը կամ ալիւրն ընկնում է աչքի մէջ եւ այնտեղ մնում;—աչքը հեշտութիւնով է հիւանդանում, կարմրում, մրմնջում, արտասուակալում, ճպռոտում է ու կազում: իսկ եթէ գրանք յաճախ են պատահում, այն ժամանակ կոպերի յետեւում սկսվում է մնային հատիկներ կամ ուռոյցներ գոյանալ, որոնք վերջիվերջոյ, անխնամ մնալուց, կարող են կուրութիւն պատճառել, որի մասին վերը խօսուեց արդէն:

Աչա այդ իսկ պատճառով աշխատեցէք, որքան կարելի է, մաքուր պահել ձեր աչքերը:

Կան մարդիկ, որոնց աչքերը տարների ընթացքում մի անգամ էլ չեն ցաւում, բայց կան եւ այնպիսիք, որոնց աչքերը կարող են հիւանդանալ յաճախակի, երբեմն էլ ամենաչնչին պատճառից:

Քիչ չէ պատահում, որ այդ հիւանդութիւնը, թաքնուած լինելով, սկսում է զարգանալ, այնպէս որ մարդ շատ անգամ չի էլ նկատում: Աչքի մէջ երկար ժամանակ համարեա ոչինչ ցաւ չէ զգացվում, բայց մէկ էլյանկարծ սկսում է կոպերն ուռչիլ ու արտասուակալել, եւ ահա այդ ժամանակ ակնյայտնի է լինում, թէ արդէն վաղուց է որ մըսային հատիկներ կամ ուռուցներ են առաջացել կոպերի յետեւում:

Բայց աւելի յաճախ է պատահում, որ բոլորովին առողջն է հիւանդանում մի ուրիշ ց, ընկերից, որ աչքացաւ ունի. հիւանդանալու պատճառն երից մինն էլ ահա այդ է թէ տանը՝ գիւղում եղած ժամանակ, եւ թէ զօրքի մէջ ծառայելիս:

Երբ մէկի աչքացաւը հէնց նոր լինի սկսուած, մային հատիկները կամ ուռոյցները նոր լինին գոյանալիս եւ մի ուրիշը, որ բոլորովին առողջ է, նրա երեսորբիչով սրբուի, կարող է հիւանդանալ, շատ անգամ բոլորովին աննկատելի կերպով, սակաւ առ սակաւ: Աչքացաւը կարող է մէկից միւսին փոխարկուել:

Աչքացաւն ի՞նչպէս է մէկից միւսին փոխարկվում: Այ ինչպէս. աչքացաւ ունեցողի երեսորբիչի, ձեռքերի եւ առհասարակ նրա բոլոր շորերի վրայ կարող է, թէկուզ ամենորիչ չափով, աչքից հոսած նարակ կամ նոյնիսկ առաջանած լիւանդից մէջ մէկ ամսուաց այդ էլ հէնց այդ էր, որ շատ մարդ կուրացաւ ռուսաց զօրքից:

Նել, որը կարող էր հիւանդի երեսորբիչից, բարձից, ձեռքերից ընկնել ուրիշի աչքի մէջ. այդ թարախի միջոցով աչքացաւը կարող է թէ մէկին եւ թէ մէկանիախն փոխարկուել: Եւ որքան աչքից շատ է հոսում թարախ կամ արտասուք, այնքան էլ տարափոխիկ է լինում այդ հիւանդութիւնը. ամենափոքր քանակութիւնով թարախն էլ, որ հազիւ է նշմարվում, կարող է մէկից միւսին փոխարկել այդ հիւանդութիւնը:

Իսկ եթէ աչքից թանձր թարախ է հոսում, այդ դէպքում հիւանդութիւնը մինչեւ անգամ լառ վարարակիչ է լինում:

—————

Առաջուայ ժամանակն երում աչքացաւի մասին շատ քիչ բան գիտէին, սակաւ էին մտածում հիւանդութեան վարակիչ լինելու մասին, զինւորներն իրենց մասին այնքան էլ հոգատար եւ գոյց չէին, առհասարակ հիւանդութեան առաջն առնելու համար շատ քիչ միջոցներ էին գործ դրվում: Եւ պատճառն էլ հէնց այդ էր, որ շատ մարդ կուրացաւ ռուսաց զօրքից:

Կուրութեան շատ գէսքէր եղան Ղրիմի, Կրօնշտատի զօրքերի եւ Վարշավեան բերդակալների մէջ, ինչպէս եւ Եկատերինոսլավում, Մոսկուայում եւ ուրիշ տեղերում:

Այսպէս օրինակ, 1841 թուին միայն Սեվաստոպոլի մէջ մէկ ամսուաց ընթացուուց 23 հոգի կուրացան

երկու աչքով, 43՝ հատ աչքով եւ 25-ի էլ տեսողութիւնը փնտացաւ. ընդամենը 91 հոգի տուժեցին: Եւ քանի որ զինուորները երկու-երեք հոգով միասին միայն մի հատ երեսարբիչ էին գործածում միաժամանակ, քանի որ մաքրապահութեան մասին հոգս չէին քաշում եւ տեղերն էլնեղուածք էր, հիւանդութիւնը շարունակվում էր, բայց հէնց որ նրանցից իւրաքանչիւրն սկսեց իւրսեպհական երեսարբիչով սրբուել, երբ նրանց մաքրապահութեան ու խստակութեան սովորցրին եւ նրանց տեղաւորեցին աւելի արձակ ու լայն, — հիւանդութիւնը շատ շուտով սկսեց մեղմանալ եւ կարծ միջոցում բոլորովին դադարեց:

Մինչդեռ այժմն ամենքն էլ—մեծաւորներն էլ, բժիշկներն էլ, սկսած Զինուորական Նախարարից, զօրքերի Կառավարչից, հոգատոար անդրանիկ գլխաւորներից, բժշկական տեսուչներից ու գլխաւոր բժիշկներից մինչի փոքրերը, — ամենքն էլ անգադար հոգս են քաշում զինուորների մասին, որոնց սովորեցնում են, խրատում են, թէ ինչպէս պէտք է հսկել մաքրապահութեան վրայ եւ պահպանել աչքը. այժմ յայտնի է մինչեւ անգամ բոլոր նոր հիւանդացողների թիւը: Առաջուայ նման այժմ աչքաթող չեն անում աչքացաւը, թոյլ չեն տալիս, որ հիւանդութիւնն աւելի սաստկանայ, այլ ընդհակառակ՝ խկոյնեւեթ միջոցներ են վնտրում հիւանդութեան առաջն առնելու համար: Եւ գլխաւորապէս պատճառը հէնց այդ է, որ թէպէտ շատ

զօրագնդերում աչքացաւ ունեցողների թիւը մեծ է, միայն, վասուք Աստծու, կուրացողների թիւը շատ քիչ է:

Սյուռամենայինիւ մեր Ժամանակ էլ պատահած են գժերախսութեան դէպքեր. ինչպէս օրինակ՝ 1883 թուին, 18-րդ Վօլօգօդեան հետեւակազօրից կարձ միջոցում 53 հոգի հիւանդացան Զերնիգովի քաղաքում, այս էլ աչքի ամենասաստիկ բորբոքումով. նրանցից երկու եւ հատ աչքով կուրացողներ եղան 10 հոգի եւ 11 հոգու էլ տեսութիւնը սաստիկ վնասուեց. ընդամենը 21 հոգի վնասուեցին:

1885 թուին Տամանեան 150-րդ հետեւակազօրից միքանի հոգի կամ բոլորովին եւ կամ մասմբ կորցրին իրենց տեսողութիւնը:

Անմաքրասէր հիւանդ մարդու երեսարբիչից, կամ բարձից կամ ձեռքերից եւ կամ որեւէ ուրիշ առարկայից շատ անգամ վարակիում են առողջ մարդիկ:

Ուրեմն լաւ կրինի, որ ձեզանցից իւրաքանչիւրդ իւր սեպհական մաքուր երեսարբիչն ունենայ եւ երբէք չարբուի ուրիշի երեսարբիչով:

Վերի ասածներից պարզ երևում է, որ տրախօմա ասուած հիւանդութիւնը վարակիչ—տարափոխիկ է. եւ տհա թէ ինչու համար պէտք է վախենալ դրանից (թէեւ պաշտպանուեն էլ դժուար չէ): Աչքացաւ ունեցողը, ինչ-

պէս ասուած է, շատ անգամ իւր աչքերում ոչ մի ցաւ չի զգում. դրսեւկոց նրա հիւանդութիւնը ոչ մէկին նկատելի չէ: Բայցեւայնպէս նրանում կամ նոր է սկսվում հիւանդութիւնը կամ արդէն կային հասուն հատիկներ եւ ուռոյցներ (տրախօմա):—Այս բանը որոշում են բժիշկները. բայցեւայնպէս աչքացաւ ունեցողը կարողէ, կատարեալ առողջ մարդու նման իւր ծառայական պարտականութիւնները կատարել. սակայն այդպէս աչքացաւ ունեցողը, եթէ մըշտական ամենի հետ ապրի սպականուած օդի մէջ, յարմար դէպք եղածին պէս կարող է վարակել առողջին, այնպէս որ ոչ ոք չի կարող բան նըկատել. մէկ էլ կրտեսնես, միքից ժամանակից յետոյ առողջ մարդու վրայ եւս երեւում է տրախօմա, սկզբում առանց ցաւի, յետոյ աչքերն սկսում են առաւօտները կազել, այնուհետեւ երեկոյեանները եւս ու այդպէս շարունակ: Դրանից յետոյ կարող է նաեւ կարմրութիւն, ցաւ եւ բորբումն յսցտնուել, որից վերջիւերջոյ մարդ կըհարկադրուի մտնել հիւանդանոյ:

Այսպէս ուրեմն զօրքի մասերում, հետզետէ աննկատ ելի կերպով աչքերի մէջ տրախօմա հիւանդութիւնը կարող է զգալի կերպով տարածուել եւ զինուրների աչքերի դրութիւնը վատթարանալ:

Ահա պատճառն այդ է, որ զինուրանոցներում իշխանութիւնն աշխատում է ցաւագար-

ներին բաժանել առողջներից, իսկ բանակատեղում նոյնպէս առանձին-առանձին տեղաւորել:

Առողջը լուկաւ է ունի աղջայաւ առնեցող ընկերէ բանցի Լրայ, որովհետեւ թէ բարձի եւ թէ բարձիերեսի վրայ կարող է վարակիչ հիւթից լինել, որից ինըն էլ կարող է հիւանդանալ:

Առողջը նոր իսկէ լուկէ հիւանդէն հօգէի և առնէ նրա կողին, եթէ չի ուզում, որ ինքն եւս վարակուի. հիւանդը հիւանդից չի լինասովկլ, իսկ առողջը, ինչպէս ասուած է, պէտք իրեն պահպանի, երբ հիւանդի մօտ է լինում: Բայցեւայնպէս հիւանդից չպէտք է վախ ենալ. նա ոչ բորսու է եւ ոչ էլ ժանտախտով բռնուած. նրա աչքացաւը կարող չէ անմիջապէս փոխուել միւսին, այլ աւելի վտանգաւոր է նրա երեսարբիչը, նրա բարձիերեսը, նրա թաշկինակը (քթի աղուկա), նրա աչքի ճպուուը, նրա ձեռքերը, եթէ մաքուր չեն—ճպուու ու թարախտու են: Եթէ մաքրութիւն լինի, հիւանդութիւնն այնքան էլ վտանգաւոր չի կարող լինել:

~~~~~

Աչքացաւ ունեցող ամեն մի զինուրի՝ թէ իշխանութիւնը եւ թէ բժիշկները, եթէ հարկաւոր է, միշտ յօժարակամ կուղարկեն հիւանդանոց կամ առողջապահական կայարան՝ բժշկուելու համար:

Բայց նկատուած է, որ զինուրներից միքանիսը, գլխաւորապէս անպիտաններն ու ծոյլերը,

Պիտմամբ կարմրացնում են իրենց աչքերը եւ դրանով բորբոքումն առաջ բերում կամ իրենք եւ կամ ընկերների խորհրդով ու օգնութիւնով։ Սակայն բժիշկը միշտ էլ կիմանայ, թէ իսկապէս ով ունի աչքացաւ, ով է իւր աչքը հաղաղում (տրոռում) ու կոպերի յետեւ ծխախոտ կամ ուրիշ բան ածում։ Բժիշկը շատ հեշտութիւնով կիմանայ, թէ ով է սուտ հիւանդ ձեւանում, որ կարողանայ առողջապահական կայարան կամ հիւանդանոց մոնել, որպէսզի ծառայութիւնից ազատ մնայ։

Նատ գժուար է բժշկին խաքելը. զինուրիներից շատերն են գատի ենթարկուել այդպիսի խաբեայութեան համար, որ մեզք բան է թէ ծառայական պարտականութեան և նէ թափառութիւն առաջ։

Մարդ ի՞նչպէս հեռու պահի իրեն աչքացաւից՝ թէ տանը, թէ գիւղում կամ քաղաքում, թէ ծառայութեան միջոցին զինուրանոցներում եւ բանակատեղում, թէ ուղեգնացութեան ժամանակ եւ թէ որեւէ մի տեղ եղած միջոցին։

Եթէ ուզում էք աչքացաւից հեռու մնալ, թող ձեղանից իւրաքանչիւրդ ուշը դնէ, ի՞նչ որ ասուելու է ներքեւ։


1. Առաւոտները հէնց որ մարդ քնից զարթնի, պէտք է խատկ ոչ մաքուր լուացուի

եւ սրբուի մաքուր երեսարթիչով. եթէ մօտերքում ջուր զինի, պէտք է ման գալ գտնել, թէկուզ հեռու տեղից. պէտք է աշխատի, եթէ հնար է, ամենամաքուր ջուր ձարել լուացուելու համար։

2. Եթէ ջուրն անմաքուր է եւ պղոտր, առաջուց պէտք է միքիչ ծեծած պաղեղ (շիբ) ածել մէջը, փայտով լաւ խառնել եւ թողնել որ պարզուի. այդ կերպով ջուրը շուտով է մաքրրում. թէեւ այն էլ պէտք է ասած, որ ուղեգնացութեան ժամանակ ջուրն այդպէս մաքրելու համար շատ սննդամ ժամանակ էլ չի լինում; բայց պաղեղ տծելը դարձեալ օգուտ է։

3. Լուացուելիս ամեն ի ց առաջ պէտք է բերանն ողողել, որովհետեւ միշտ էլ կարող է պատահել, որ բերանի մէջ կերակուրի մնացորդ, ծխախոտի մանրունք եւ ուրիշ անմաքրութիւններ լինին մնացած. ուրեմն եթէ մարդ այդպիսի բերանով կում անի ջուրն ու ածէ բռի մէջ եւ լուացուի, այն ժամանակ կարող է պատահել, որ բերանի մէջ մնացած անմաքրութիւններից աչքի մէջ ընկնին եւ պատճառ դառնան աչքի կարմրելուն, միրմնջալուն կամ բորբոքման։

Եթէ ծորակաւոր լուացարան (սմանականութեան) զինի, այն ժամանակ թող մէկդ միւսին օգնէ—ձեռքին ջուր ածէ լուացուելիս. նախեառաջ պէտք է օճառով (սապնով) լուա-



նալ ձեռքերը եւ ապա թէ լուացուելու լուալ  
աչքերը:

4. Ամեն անգամ էլ պէտք է սրբուել  
աւղինական երեսարբիչով, որը պէտք է շուտո-  
շուտ լուանալ. երեսարբիչը չպէտք է ընկե-  
րին տալ,—թող նա իւր սեպհական երեսար-  
բիչով սրբուի:

5. Մարզանքից (օյ ցպեհել) պահանոր-  
դութիւնից, ձիերը ժուովելուց, թոզուո աշ-  
խատանքից կամ ուղեգնացովթիւնից վերադառ-  
նալուն պէս ամեն անգամ էլ պէտք է լաւ  
լուացուել. պէտք է լուացուել նոյնկոկ ու-  
ղեգնացովթեան միջոցին, որի համար միշտ  
կարելի է ժամանակ գտնել:

6. Միշտ պէտք է գոնէ 2—3 երեսարբ-  
իչ եւ մի այլքան էլ թաշկին ակ ունե-  
նալ. բան չկայ, թող ամենահասարակ ու ա-  
ժամագին լինի եւ հաստ կտորից, միայնթէ  
լինի եւ մաքուր պահուի, որի համար շատ  
ժամանակ չի կորչելու. մինդեռ անմաքուր  
երեսարբիչով կամ թաշկինակով սրբուելուց կա-  
րող է աչքացաւ յառաջանալ:

7. Մարդ միշտ էլ պէտք է մի խտակ  
թաշկինակ ունենայ իւր գրպանում, որ հար-  
կաւոր եղած միջոցին նրանով սրբի կոպերը,  
ձակատի եւ առհասարակ երեսի վրայից քըր-  
տինքը, որովհետեւ քրանքուո կոպերի վրայ շատ

հեշտութիւնով է կայում որեւէ անմաքութիւն  
եւ կամ թող նստում. իսկ եթէ սրբուի մա-  
քուր թաշկինակով, աչքի մէջ ոչինչ չի ընկնիլ  
եւ ցաւի պատճառ չի դառնալ:

Բայց եթէ թաշկինակ լինի եւ երեսն ու  
աչքերը թեւքերով ու փէշով սրբուի, կարող է  
կեղտ կամ մի այլ բան ընկնել աչքի մէջ եւ ցաւ  
առաջացնել, եւ բայցի գրանից կըկեղտուուկին  
թեւքերը, փէշերը եւ բոլոր շորերը. Անմաքուր  
ձեռքերով երբէք չպէտք է սրբել աչքերը:

8. Մարդ պէտք է միշտ հաւատու պահի և  
անհողնել, և բոլոր սողիառհեղնը և առհասա-  
րակ է-ը լըր կողմը. որքան կարելի է պէտք է  
աշխատել, որ զօրանոց կամ նորձիթ մոտած ժա-  
մանակ կեղտ կամ աղբ չտարուի հետը:

Աւելի լաւ է որ մարդ միքանի բաներից  
ձեռք վերցնի եւ իւր բարձի համար գոնէ մի  
երկու երես ունենայ, որոնք չպէտք է գունա-  
ւոր լինին, այլ սպիտակ կառչէց, որպէսզի կեղ-  
տը շատ շուտով նկատուի: Հենց որ նկա-  
տուի որ բարձի երեսը կեղտուուել է, իս-  
կոյն պէտք է փոխել—իսուակն անցկացնել, իսկ  
կեղտուուը լուանալ: Մի երկու հատ բարձի-  
երես ունենան այնքան էլ զժուար չէ, որով-  
հետեւ թանգ չէ, այն ինչ աչքը՝ շատ թանգ  
արժէ մարդուս համար:

Ուրիշի բարձի վրայ չպէտք է քնել եւ եթէ

Հնար է, մի թոյլ տար, որ ուրիշն էլ քո բարձի  
վրայ քնի:

Երբ մարդ նկատում է, որ իւր շուրջը  
կեղտոտուել է, խոկոյն, որքան կարելի է շու-  
տով, պէտք է հաւաքի կեղտը եւ գցի կամ վա-  
ռարան եւ կամ աղբանոց: Նորերը, որքան կա-  
րելի է, պէտք է շուտ-շուտ թափ տալ, նոյնպէս  
ներքնակը (գօշակ), բարձերը, վերմակը (եօր-  
դան), բայց ոչ թէ սենեակի, զօրանոցի կամ  
խրճիթի մէջ, այլ գուրսը՝ դաւանը. կեղտոտ եւ  
անպէտքացած սպիտակեղէնը մօտը չպէտք է  
պահել, շուտ-շուտ պիտի լուանալ. ինչ տեսակ  
սպիտակեղէն ուղում է լինի, երբէք չպէտք է  
չորացնել զօրանոցում կամ խրճիթի մէջ, այլ  
բոլորովին դուրսը:

Ներքնակի եւ բարձի մէջ ածած յարդը,  
խոտը կամ խաիրը (ծիլոր) պէտք է աշխատել  
լուածած փոխել, բանի չեն փշրուել կամ  
թաղիքացել:

Եթէ հնար է, պէտք է ներքնակը ծած-  
կել պատառակալով (չարասաւ) եւ մաքուր  
վերմակ պահել միշտ:

9. Միշտ լպէտք է բաղանիք գնալ, իոկ  
ամառը շուտ-շուտ լողանալ գետում: Բայց եթէ  
աչքի ամենաթեթեւ հիւանդութեան հետքն  
անգամ լինի, այն ժամանակ բաղանիքում չպէտք  
է շատ տաք գուրշու (բուղ) կամ տաք ջրի

ազգեցութեան ենթարկել իրեն, այլ միայն տաք  
ջրով լուադուել:

10. Օղն (արաղ), գարեջուրը եւ գինին  
աչքին շատ վնասակար են. այդ խմիչքնե-  
րից աչքերը կարմրում են եւ բորբռվում, որ  
ասել է թէ ոգելից խմիչքներ կամ չպէտք է  
գործածել եւ կամ թէ չէ՝ քիչ եւ չափաւոր  
կերպով. իու ենէ աշխացած ամենափուր նշան  
անգամ լինի, այն ժամանակ օղի, գարեջուր  
եւ գինի ամենեին չպէտք է գործ  
ածել:

11. Այն էլ պէտք է գիտենաք, որ նե-  
ղուածութեան մէջ նեղ նեղուած ու աղականուած  
օդուած կարող է ասուովի աշխացաւ առաջանալ:

Գեղանից շատերը լաւ գիտեն, որ երբ ձեզ  
բազմութիւնով խմիչքն ծառայութեան էին  
տանում շոգեկառքերով եւ շոգենաւերով,  
թթուած օգում շատերդ աչքացաւ ասացաք:

Միեւնոյնն է լինում նաեւ զօրանոցում,  
վրանում եւ կամ խրճիթում: Ուստի, հէնց որ  
կարելի լինի, պէտք է բաց անել դուները, լու-  
սամուռներն ու օդանացները. տւելի լաւ է ցուրտ  
լինի, քան թէ օդը թթուած ու հեղձոցից  
(շնչառութեան համար ծանր). եթէ այդպէս  
անէք, համ դուք կը լիլինիք առազգ, համ էլ ձեր  
աչքերը չեն ցաւիլ:

Բանակատեղում վրանների փէշերը (ծայ-

ըերը) պէտք է շուտ-շուտ բարձրացնել եւ որքան կարելի է շատ, որպէսզի, մանաւանդ անձրեւից յետոյ, վնասակար, թթուած օդ չմնայ նրանց մէջ:

Երբ որ սկսում են զօրանոցները, սենեակները կամ վրանները սրբել, ամենքդ էլ դուրս գնացէք, որպէսզի ձեր աչքերն աղատ մնան թողից:

12. Լաւ իմացէք, որ ծխամորնի (չիբուխ) կամ գլանակի (պապիրոս) ծուխը, ինչպէս եւ ամենայն ծովի, աչքի հոգեհանն է—շատ է վնասում աչքին. ահա այդ պատճառով ոչ զօրանոցում պէտք է ծխել, ոչ վրանի մէջ եւ ոչ սենեակում, այլ գուրմը, բաց օգում, ուր ծովիը մէկ տեղ չի մնաւ, այլ իսկոյն ցնդվում է:

13. Հէնց որ դուրս գալու թոյլուութիւն է լինում, էլ միք նոտիլ զօրանոցում, սենեակում, վրանի կամ խրճիթի մէջ, այլ իսկոյն գուրս գնացէք. պարս ճառ-ը և նարճ օտառ-մարդ ա-ելէ ա-ողջ կը լինէ, քան թէ սենեակի փակուած, թթուած ու հեղձուցիչ օդում:

Եթէ դուք վերի բոլոր ասածները կտտարէք, դուք կրվերադառնաք ձեր տուն առանց աչքացափ, եւ որեւէ հիւանդութիւն չէք տանիլ հետներդ ձեր տուն. — իսկ եթէ ձեր աչքերը բոլորովին առողջացած չեն լինին եւ դուք ձեզ այնպէս պահպանէք,

ինչպէս որ վերեն ասուած է, այն ժամանակ ձեր ունեցած աչքացափ մնացորդն էլ կանչետանայ:

Երբ վերադառնաք ձեր տները, ձեր գիւղերը, ձեր կենալու տեղը եւ տեմնէք աչքացաւոյ հիւանդներ, նրանց ևս սովորեցրէք, թէ ինչպէս պէտք է պահպանել աչքը, ինչպէս որ ձեզ սովորեցրել են, ինչ որ կարդացել էք այս գրքոյկի մէջ. ինչ որ ձեզ ասում են եւ գուք կատարում էք ծառայութեան ժամանակ, այնպէս էլ ձեր տանը կատարեցէք. ինչպէս որ սովորեցրել են ձեզ, այնպէս էլ գուք սովորեցրէք առողջներին, թէ ինչպէս պէտք է պահպանեն իրենց աչքերը:

Երբ ձեր աչքերն սկսում են ցաւել, որքան կարելի է, շուտով ճժնին դիմեցէք եւ ունե զանազան տգէտ պառաներին կամ սափրիչներին (դալլաք), որոնք շատ անգամ ձեզ խարում են իրենց միքանի կոպէկ օգուտի համար:

Իսկ եթէ բժիշկ զինի, այն ժամանակ աշխատեցէք ճառ-ը պահել ձեր աչքերը, ձեր երեսն ու ձեռքերը. արեգակից, ծխից, կրակից եւ թողից հեռու պահեցէք ձեզ. ուշագրութիւն գարձէք, որ ամբողջ տան մէջ մաքրութիւն տիրի եւ մորներում պահեցէք այն բոլորը, ինչ որ կըկարդաք այս գրքոյկի մէջ:



Զինւորներ, երբ գուք թոյլտութիւն ստանաք դուրս գնալու աչքացաւի առողջապահական կայա- րանից եւ վերագառնաք ձեր զօրագունդը (պօկ), ձեր վաշտը (կօմսնդա) կամ գումարտակը (բատա- լիօն) ընկերներիդ մօտ, կամ երբ ձեր ծառայու- թեսն ժամանակը լրանայ եւ գուք գնաք ձեր տնե- րը, չուռանաւ այն ամենը, ինչ որ ձեզ սովորեցրել են. պատմեցէք այդ բոլորի մասին թէ ձեր պաշ- տօնակիցներին, թէ ձեր ազգականներին եւ թէ բո- լոր ձեր հայրենակիցներին:

Ոչ միայն չպէտք է գէն ձգէք այս գրքոյկը, այլ պիտի պահէն+ եւ տաք ուրիշներին եւս, որ նրանք էլ կարդան:

Լա- իմացած եղէ+, որ եթէ ձեր աչքը բոլո- րովին առողջացած չլինի եւ գուք անմաքուր ու ան- փոյթ մնաք, այն ժամանակ ցաւը շատ հեշտութիւ- նով կրսաստիկանայ, աչքներդ նորից կրախեն ճպուռ- ել եւ ժահը գնալ. իսկ ձեզմնից կարող են աչ- քացաւ ստանուլ ձեր եղբայրները, քոյրերը, մէկ խօսքով բոլորը, ովքեր որ ընակիում են գերգաս- տան մէջ. այդպիսի գէպէրում այս հիւանդու- թիւնն առաւել տարավոխիկ է լինում. այդ պատ- ճառով եւ գուք պարտական էք պահպանել թէ ձեզ եւ թէ նրանց ամենքին: Ով որ արդէն մէկ անգամ աչքացաւ է ստացել, այդպիսին հեշտու- թիւնով կարող է երկրորդ անգամ ընկնել: Բայց եթէ այս գրքոյի մէջ ասուածները բոլորն է կա-

աարէք, այն ժամանակ ոչ միայն դուք ինքներդ չէք վարակուիլ եւ ձերոնց չէք վարակիլ, այլ դեռ օգուտ էլ կրտաք թէ ձեզ եւ թէ ձեր մերձաւոր- ներին:

Պաշտօնավարութեան միջոցին ձեր վրայ հոգս են քաշում թէ Թագաւորը, թէ նրա ստո- րադրեալները. ուր եմն դուք ինքներդ էլ ձեզ պահպանեցէք թէ պաշտօնավարութեան միջո- ցին եւ թէ տուն վերադարձ ժամանակ:

Խնդն իրեն պահպանողին՝ Աստուած էլ կրպահի:

## ՅԱԻԵԼՈՒԱԾ

Աչքի համար աւելի եւս վտանգաւոր է սեռական անդամների այն հիւանդութիւնը, որ առում են՝ կախում է. այդ հիւանդութիւնը կարող է շատ շատութ կործանիչ ազդեցութիւն ունենալ աշքի վրայ. այդ մասին ի հարկէ որ դուք լուսն կը կինք թէ զօրքում եւ թէ ձեր տներում եղած ժամանակ։

ԽՐԱՏՆԵՐ ՍՈՒՍՈՒՆԱԿ (ՏՐԻՊԵՐ) ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻՆ

Սուսունակը որ յայտնի է արքողեր անունով, ձեզանից շատերը ոչ միայն լսած կը լինիք գրա մասին, այլ գժբախտաբար գուցէ փորձով էլ կը գիտենաք, թէ ինչ բան է։

Սուսունակը կամ արխպերը սեռական անդամի մի այնպիսի հիւանդութիւն է, որ հիւանդից փոխվում է առողջին, այսինքն սեռական յարաբերութիւն ունենալիս հիւանդ կնկանից վարակվում է տղամարդը եւ կամ ընդհակառակն է լինում—հիւանդ տղամարդից վարակվում է կինը։

Ահա ինչպէս է վարակվում տղամարդը. Հիւանդու կնկայ հետ սեռական յարաբերութիւն ունենալուց մի 3—8 օր յետոյ, երբեմն էլ աւելի վաղ, խողովակի վերջում միզանցքի մէջ սկսվում է մըրմնջոց (կոկիծ) եւ յետոյ էլ սկսում է խողովակից ժահը հոսել, որ սկզբում փոքր քանակութիւնով է լինում եւ հում ձուի սպիտակուցի գոյն է ունենում երբ այդ ժահը չորանում է, խողովակի բերանը կպչում է:

Ժահը հոսել սկսուելուց մի երկու օր յետոյ կոկիծը փոխվում է սասափկ այրող ցափ եւ օր օրի վրայ էլ աւելանում է ցաւը. այդ ցաւը մանաւանդաւելի զգալի է լինում միզելու (շուելու) ժամանակ. թէպէտեւ շուտ-շուտ միզել է ուղեցնում, բայց մէզը քիչ է դուրս գալիս, որն աւելի եւս անհանգստութիւն է պատճառում հիւանդին:

Ահա այս միջոցին ժահը, որ սկզբում հում ձուի սպիտակուցի նման էր, սկսում է աւելի թանձքանալ եւ վահրի նմանուել. այնուհետեւ, վահրի հոսումը հետզհետէ աւելանում է եւ ապա այնքան է շատ անում, որ ապականում է —կեղտուում է շապիկը, շապկալնկերը (վարտիք, վորսան). սեռանդամի մօտերքի սպիտակեղէնը շարունակ թաց է լինում:

Բժշկուելուց յետոյ թէպէտեւ ժահը սաստիկ հոսումը (գնալը) քանիում է այնքան, որ կաթիլկաթիլ է դուրս գալիս, բայց եւայնպէս քանի որ խողովակից քիչ թէ շատ ժահը է դուրս գալիս,

ասել է թէ դեռ չի անցել հիւանդութիւնը: Ժահը հոսելու ժամանակ եթէ մարդ մօտենայ կնկայ (սեռական յարաբերութիւն ունենայ), բացի այն որ կարող է կինը վարակուել, այլեւ իւր հիւանդութիւնը կըսաստկանայ:

Ահա այս ձանապարհով, այն է՝ ժահը միջոցով է, որ այդ հիւանդութիւնը մէկից միւսին է փոխվում տղամարդը վարակվում է կինարմատից, վերջինս էլ տղամարդուց:

Սակայն հոսելու ժամանակ այդ ժահը միայն սեռական անդամների համար չէ որ վտանգաւոր է, գա աւելի եւս վտանգաւոր է աչքի համար:

Բաւական է որ այդ ժահը մի փոքր կաթիլ ընկնի աչքի մէջ, այնուհետեւ մի երկու օրից յետոյ այնպիսի աչքացաւ կըսկսուի, որից շատ անգամ բոլորուին կհանում է աչքը: Ելի բախտաւոր է նա, որի աչքի մէջ, սաստիկ տանջանք քաշելուց յետոյ, միայն փոքրիկ հատեր են մնում: Նատ է պատահում, որ ոչ թէ մէկը, այլ երկու աչքն էլ միասին է սկսում ցաւել, այդպիսի թըշուառները տանջանք քաշելուց յետոյ, վերջիվերջոյ կարող են կուրսնալ:

Այս սարսափելի հիւանդութիւնն այնպէս արագ զարգանալ գիտէ, որ բժշկական օգնութիւնը շատ քիչ գէպքերում է կարողանում վրայ հասնել այնպիսի ժամանակ, երբ դեռ կարելի է ցաւին դարման անել: Սովորաբար բժշկին ոչինչ չէ մնում անե-

լու, բայց միայն աշխատել որ գոնէ միւս աչքը պահպանուի, եթէ առողջ է, եւ հիւանդի տանջանքը քչացնի ու աշխատի, եթէ հնար է, հիւանդութիւնը շատ վնասներ չպատճառի:

Սակայն եթէ դժուար է այդ հիւանդութեան օգնելը, նրանից հեռու մնան ամենեւին դժուար չէ մանաւանդ նրանց համար, որոնց յայտնի է, թէ որպիսի սարսափելի հիւանդութիւն է դա եւ թէ ինչից է առաջանում: Այդ հիւանդութիւնից հեռու մնալը դժուար չէ նոյնպէս նրա համար, ով որ չի ցականում հատ աչքից կամ զոյգ աչքից զրոկուել—կուրանալ:

Եթէ ժահրի հոսումը դեռ չի վերջացել, ուրեմն աւելի մեծ հոգացողութիւն, ինամեք եւ զգուշութիւն է կարկաւոր, որպէսզի մի որեւէ անսպասելի կերպով այդ Հարավիւն ժահրից աւագի հէջ լընկնի:

Ով որ սուսունակ (տրիպէր) ունի, նա աւելի շուտ-շուտ է տանում ձեռքը դէպի խոզովակ՝ կտմ քնական կարիքի—միզելու համար, կամ բժշկինց ցոյց տալու, վրան դեղ գնելու եւ կամ հէնց նրա համար, որ ցաւում է եւ այդ պատճառով ձեռքն իրեն-իրեն մօտենում ցաւող տեղին: Եւ ամեն անգամին էլ ձեռքերը ժահրութւմ են թէ սեռանդամից, թէ կապերից, եթէ կայ, եւ թէ շապկից ու վարտիքից, որոնց վրայ հօսել է ժահրը: Ձեռքերի այդպէս ապականուած միջոցին եթէ պատահի որ աչքը քոր գայ եւ հիւանդը մոռանայ ու այդպիսի կեղտոտ ձեռքերով աչքը հակաղի—տրորի, այն

ժամանակ կարող է մեծ վտանգ սպառնալ աչքին: Այդպիսի դէպքերում հէնց որ մարդ նկատի իւր փնթիւթիւնը, հարկաւոր է, առանց մի բողէ անգամ ուշանալու, ձեռքերը մաքուր լուանալ, ապա մաքուր ձեռքերով եւ որքան կարելի է ամենայն խնամքով լուալ կեղտոտ ձեռքերով հաղաղած աչքը եւ ապա անմիջապէս վազել բժշկին ու պատմել նրան պատահած դժբախտութեան մասին:

Դժբախտաբար շատ անգամ պատահում է, որ մարդ չի նկատում, թէ կեղտոտ ձեռքերով երբ է դիպում աչքերին: Սակայն միայն ձեռքերը չեն, որոնցից կարող է այդ դժբախտութիւնը պատահել, այլ անզգոյց եղած ժամանակ սպիտակեղէնից, շորերից եւ ուրիշ առարկաներից եւս կարող է այդ ժահրից ընկնել աչքի մէջ, երբ մարդ այդ մասին խսիր չէ ել մտածում, եւ հէնց այդ պատճառով էլ ուռունակ—տրիպեր ունեցած ժամանակ մի ամենայնին բան նկատելիս, առանց ուշացնելու, պէտք է ասել բժշկին, որ սա կարողանայ հէնց սկզբից հիւանդութեան առաջն առնել՝ բնաջինջ անել եւ ցթողնել որ լոյս ընկնի:

Ժահրոտ ձեռքերը քանի որ մաքուր լուացած չեն, չպէտք է սրբել ոչ շորերով, ոչ սպիտակեղէնով եւ ոչ ել առհասարակ ամեն բանով եւ առանձնապէս այնպիսի առարկաներով, որոնցով մարդ ձեռքերն ու երեսն է սրբում, ինչպէս են, օրինակ՝ թաշկինակները, երեսարթիչները, բարձի երեսները, պատառակալալը (չարստ): Նաև՝ նրա համար, որ

տուանց ջրով լուացուելու, ինչպէս որ պէտք է, ձեռքերը չեն մաքրուիլ եւ երկրորդ նրա համար, որ այդպիսի կեղուոտ ձեռքերով դիպած տեղին յետոյ կարող է դիպէլ հիւանդն ինքը եւ կամ մի ուրիշ առողջ մարդ:

Պատահաբար ժահրով կեղուոտած առարկաները, բացի սպիտակեղէնից ու կապերից, ամեն անգամ, առանց ուշացնելու, պէտք է լուանալ. բոլոր սպիտակեղէնները մինչի լուանալը պէտք է առանձին կապոցում փաթաթել եւ պահել այնպիսի տեղում, ուր ոչ մաքուր սպիտակեղէն լինի դրուած եւ ոչ վերնազգեստ: Խակ ինչ որ վերաբերում է կապերին—փախս, բամբակ, ծուատ (քրքրած քաթան—կօրույ), փաթթան, աւելի լաւ է, որ ամեն անգամ դրանց փոխելուց յետոյ ձգել այնպիսի տեղ, որ ոչ որի ձեռք զննին, թէպէտեւ աւելի յարմարաւորը էրտէն Ֆէջ ձգելն է, որպէսզի բոլորովին ոչնչացուի:

Շապիկը փոխելիս հարկաւոր է զգոյշ լինել—այնպէս համել որ երեսին չփափչի մանաւանդ կեղուոտած փէշերը. այս ժամանակ ամենից լաւն այն է՝ աչքերը խփել: Վերջապէս թող ձեղանից ամեն մէկդ իրեն համար կանոն շինի, որ ամեն անգամ—ցաւոտ խողովակին, կապերին, կեղուոտած սպիտակեղէնին եւ միւս առարկաներին, որոնք ժահրուոտած են,—ձեռք տալուց յետոյ, անպատճառ օճառով (սապնով) լու լուանաց ձեռքերն ու սրբուի առանձին երեսսրբիչով. խակ այդ երեսսրբիւ

չով այլեւս երեսը չարբել, որպէսզի աչքն ազդաց նույ վարակութելուց, այլ երեսի համար ուրիշ երեսսրբիչ պահէլ:

Մոքերնումդ լաւ տպաւորեցէք. եթէ զինւորը իւր աշխատանքների ժամանակ սուսունակ—տրիպեր սուսանայ, այդ հիւանդութիւնն ինքն իրեն վէ անցնէլ իսկ ճանապարհորդելիս անհնարին է դրանից բժշկուել:

Սուսունակ ունեցողը պէտք է աշխատի, որքան կարելի է, ոտի վրայ երկար չկանգնի, ման չգայ շատ, ձի ճնատի, գարեջուր, գինի, ողի չգործ ածի, որովհետեւ այդ բոլորիցն էլ կանելը սաստկանում է:

Խակ ով որ կրակի այդ հիւանդութեան հակառակ գնալ, այսինքն շատ ման կրգայ, ձի կրնատի կամ երկար ժամանակ կանգնած կրմնայ, այդպիսի անզգոյշն անպատճառ անկողին կրմտնի եւ նրա ամորձիքների (պլորների) մէջ կրգոյանայ շանհւցք ասուած հիւանդութիւնը. ամորձիքները կրսկսին ուղիւ ու սաստիկ ցաւիլ, կրկաբմրին. այդ հիւանդութիւնն ունեցած ժամանակ ոչ միայն չի կարողանում ման գալ ոտով կամ ձիով, այլ մարդնատել անգամ դժուարանում է:

ծշմարիտ է, ծառայութեան մէջ զինւորը, եթէ տրիպեր ունենայ, նրա համար շատ գժուար է հարկաւոր մաքրութեան ու խոտակութեան վրայ ուշագրութիւն գարձնել, որի համար շատ անգամ ժամանակ եւս չի լինում եւ ոչ էլ անհրաժեշտ

եղած բաները, օրինակ՝ ջուր, օճառ (սապոն), որ վարժունքի ժամանակ բնական կարիքի (ջրվեթ) համար դուրս գնալուց յետոյ ձեռքերը լուանայ: Այս այդ իսկ պատճառով յիշեցէք այս բոլորը. հենց որ նկատէք, թէ խողովակը լաւ դրութեան մէջ չէ, անմիջապէս յայտնեցէք ձեր ենթասպաներին (ունտեր-օֆիիցեր), որպէսզի նա ձեզ բժշկի մօտ ու զարկի:

Եթէ ամենայն կերպով զգոյշ վարուէք եւ այդ մասին ասուածները ճշտութիւնով կատարէք, թէ հիւանդութիւնը երեւայ էլ, այն ժամանակ բժշուելը հեշտ կը լինի եւ յաջողութիւնով կը վերջանայ եւ բացի դրանից՝ ձեր աշքերն առողջ եւ անլինաս կը լինած:


Նատ վառնդառաջ բան կը դառնայ, եթէ ծանրէք այդ հիւանդութիւնը եւ չասէք իւր ժամանակին. այդ տեսակ հիւանդութիւնով վարակուածից ոչ միայն ոչինչ չեն պահանջում, այլև իշխանութիւնը հոգս է քաշում՝ անմիջապէս բժշկական օգնութիւն հասցնել, որպէսզի թէ հիւանդը շուտ պրծնի այդ ցաւից եւ թէ աշքն ազատ մնայ հիւանդանալուց:



Զօրքերի մէջ երևացող աչքացաւի դէմ գործածելի շատ միջոցներից մինն էլ, անկասկած, նրանցում օգտակար մտքեր տարածելուն է, թէ ի՞նչ ե՞ն այդ հիւանդութեան պատճառները եւ թէ որո՞նք այն միջոցները, որոնցով կարելի է դրանց առաջն առնելու Այդպիսի մտքեր տարածելուն կարող է օգնել՝ բժշկի, սպայի (օֆիցերի) կենդանի խօսքը նոյնպէս և տպագրական խօսքը, որպիսին ահա այս գը.քոյկն է. զինուորներն այս կերպով ձեռք ըլերած օգտակար մտքերը՝ կա յը ե՞ն ի ք վ ե՞ր ա դ ա ը ժ ա մ ա ն ա կ հետները կը տանեն և կը տարածեն նաև ազգայինակութեան մէջ, որտեղ սաստիկ տարածուած է աչքացաւը:

Այս գը.քոյկը նւր տեսակի մէջ լինելով առաջին փորձերից մինը, գըուած է զինուորների մէջ օգտակար մտքեր տարածելու համար, որպէսզի նրանք և կը ենց կողմից նոյն մտքերը տարածեն ազգաբնակութեան մէջ:

Գրագէտ զինուորներից շատերը սիրում են կարգալ. համարձակ կարելի է ենթադրել թէ նրանք, որոնք կը կարդան այս գը.քոյկը, կը ենց կարդացածից գոնէ միքանի հարկաւոր խօստներ կը լըսնեն:



29

Զօքքերի մէջ երեացող աչքացաւի դէմ գործածելի շատ միջոցներից մինն էլ, անկասկած, նրանցում օգտակար մտքեր տարածելն է, թէ ի՞նչ են այդ հիւանդութեան պատճառները և թէ որո՞նք այն միջոցները, որոնցով կարելի է գրանց առաջն առնել Այդպիսի մտքեր տարածելուն կարող է օգնել՝ բժշկի, սպայի (օֆիցերի) կենդանի խօսքը, նոյնպէս և տպալրականն խօսքը, որպիսին ահա այս գրքոյին է. զինուորներն այս կերպով ձեռք բերած օգտակար մտքերը՝ հայրենիք վեր ըստ արձանի ակ հետները կըտանեն և կըտարածեն նաև ազգայնակութեան մէջ, որտեղ սաստիկ տարածուած է աչքացաւը:

Այս գրքոյիը իւր տեսակի մէջ լինելով առաջին փորձերից մինը, գոտուած է զինուորները մէջ օգտակար մտքեր տարածելու համար, որպէսզի նրանք ևս իրենց կողմից նոյն մտքերը տարածեն ազգայնակութեան մէջ:

Գրագէտ զինուորներից շատերը սիրում են կարգար. համարձակ կարելի է ենթադրել թէ նրանք, որո՞նք կըկարդան այս գրքոյիը, իրենց կարդացածից գոնէ միքանի հարկաւոր խրատներ կըմբռնեն:

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0075025

